

Խ. Մ. ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ, *Անկարկներ հայ մանկական գրականության պատմության, Հայկական ՍՍՌ-ԳԱ Հրատարակչություն, 1961, 256 էջ, գինը 70 կ.*

Մանկական գրականության հարցերը միշտ էլ բուռն են թել գրականագետներին, թե՛ գրողներին և թե՛ անհրաժեշտ գրաստիարակության մեջ գրադպրոցներին։ Խ. Գյուլնազարյանի «Անկարկներ հայ մանկական գրականության պատմության» աշխատությունը այդ երևույթի կոնկրետ գրականության մեկն է և Հեղինակը փորձել է ընդհանրացնել հայ մանկական գրականության պատմությունը։ Այս նպատակին հասնելու համար նա մանրամասն վերլուծության է ենթարկել առավել աչքի ընկած հայ մանկագիրների ստեղծագործությունը՝ հարցին մոտենալով ոչ միայն գրականագիտական, այլև տեղեկանական ու մանկավարժական տեսակետից։

Աշխատության առաջին մասում, որը նվիրված է մանկական գրականության առանձնահատկությունների լուսարանմանը, հեղինակը կոնկրետ օրինակների վերլուծության միջոցով է մանկական երկին ներկայացվող մի շարք պատկերներ։ Մանկան տարիքը պահանջում է առանձնահատուկ մոտեցում երեխայի նկատմամբ ոչ միայն մանկավարժից, այլև գրողից։ Մանկագիրը գործ ունի, ինչպես հեղինակն է պատկերավոր ձևով ասում՝ «նոր միայն աշխարհ մտնող անփորձ ճանապարհորդի»։ Հետ, աշխարհ, որն իր անբավ «ինչու»-ներն է առաջադրում դեռևս կենսափորձ չունեցող մանկան։ Ծիշտ է նկատում հեղինակը՝ բանի որ մանկական գրողը գործ ունի կոնկրետ տարիքի երեխաների հետ, պարտավոր է հաշվի առնել այդ տարիքի առանձնահատկությունը։

Այնուհետև հեղինակը առաջ է քաշում մանկան հետ «տրույն» ձևով խոսելու պահանջը։ Մանկան համար «հրաշալիքներով լի աշխարհում, երբ ամեն ինչ դեռ նոր է, գեղեցիկ կամ սարսափելի, ամեն ինչ վառում է նրա երակայությունը, այդ «ամեն ինչի» մասին ասված խոսքը չի կարող չոր ու ցամաք խրատ լինել, այսպիսի խոսքը չի ընդունվի երեխայի կողմից» (էջ 12)։ Այս կապակցությամբ հետաքրքիր վերլուծություն է կատարում Խ. Գյուլնազարյանը անվանի մանկագիր Բարտոյի «Լամա», որը մեծ վարպետությամբ հայերեն է փոխադրել Ա. Խնկոյանը։

Երբի առաջին մասում հեղինակը բնորոշում է նաև տարբեր տարիքի երեխաների համար պահանջվող ստեղծագործությունների առանձնա-

հատկությունների հարցը, ցույց տալիս, որ դրանք դաժնադանվում են ոչ միայն թեմատիկ բովանդակությամբ, այլև ֆարուսայի, կերպավորման արվեստի, լեզվի ու ոճի տեսակետից։ Նշելով, որ հարկ չկա մանկական գրականության համար, ինչ-որ նոր, «հատուկ» լեզու հնարել, Խ. Գյուլնազարյանն ընդգծում է, որ մանուկների համար պետք է գրել բնական երկվայերի մասին և բնական լեզվով, առանց փափսուկի և ճոռոմարանության։ Այդ լեզուն պետք է լրիվ պարզ, մատչելի, հասկանալի, գեղեցիկ, մի բան, որին գրողը կարող է հասնել տարիների քրտնաջան աշխատանքով։ Հեղինակը կանգ է առնում նաև մանկական գրվածքի հետաքրքրաշարժության հարցի վրա, իրավացիորեն գտնելով, որ տվյալ դեպքում արկածայինը չպետք է վերածվի արկածախնդրության, որը դրական, նպատակասլաց զգացմունքներ առաջացնելու փոխարեն կարող է երեխայի մեջ ծնել սնամեջ անուրջներ, նրան դարձնելով դատարկ երազող։

Աշխատության երկրորդ գլխում շարադրված է հայ մանկական գրականության ձևավորման ու զարգացման պատմությունը՝ մինչև Հեղինակների միջին դարից մինչև 19-րդ դարի սկզբները։ Հայ մանկական գրականության արմատները հնուց են դալիս։ Մանկական երկերի բաղմամբիլ նմուշների մեծ հանդիպում են համարյա բոլոր պատմիչների մոտ, հատկապես առաջին հանելուկի ժանրում, որոնց միջոցով մանուկները ծանոթանում էին շրջապատի առարկաների կական հատկություններին ու գծերին։ Այսպիսի օրինակներ շատ կան։ Շնորհալու, Մ. Գոշի, Վ. Այգեկցու և ուրիշների մոտ, որոնց լավագույն ստեղծագործությունները «դառնում են ժամանակի մանուկների ու պատանիների կրթության և դաստիարակության գործոններ» (էջ 31)։

Դրում հատուկ տեղ է հատկացված Խ. Արուսյանի մանկական երկերի վերլուծությանը։ Հեղինակը ցույց է տալիս, որ Արուսյանի մանկապատանեկան առարկաներում կան Մ. Գոշի ու Վ. Այգեկցուց վերցված շատ տեսքերի մշակումներ, որոնք ունեն գլխավորապես սոցիալական բովանդակություն։ Դրանց ընդհանուր ոգին իր բարերար ազդեցությունն է ունեցել նաև Արուսյանի հետնորդներին՝ Ռ. Պատկանյանի, Հ. Թումանյանի, Ղ. Աղայանի և Ա. Խնկոյանի մանկական ստեղծագործության վրա։

և. Բյուրնազարյանը հանգամանորեն վերլուծել է Ռ. Պատեանյանի մանկական ստեղծագործությունները, ցույց տալով նրանց արժանի տեղը և նշանակությունը մեր մանկագրության պատմության մեջ։ Ուշագրավ են հատկապես Պատեանյանի՝ նախադպրոցական տարիքի երեխաների համար գրած երկերի վերլուծությունները, պատեանյանական վարպետության այն բաղադրանքները, որոնց բացահայտումը, որոնց միջոցով տաղանդավոր բանաստեղծը կարողանում էր տեղ հասցնել բարոյախոսական խրատը։

Աշխատության մեջ արժանի տեղ է հատկացված Ղ. Աղայանի և Հ. Թումանյանի մանկական երկերի բնութագրմանը։ Ղ. Աղայանը՝ այդ հայկական անդերսներ, նշում է հեղինակը, հանդիսանում է հայ կլասիկ հերիաթի սկզբունքների մշակողը և դրանք գործնականորեն կիրառողը։ Հետաքրքիր են հենց իր՝ Աղայանի մտքերը հերիաթի տեսության մասին։ Իրավացիորեն մերժելով «Մուրճ» ամսագրի «Մանկական բնութագրություն» հոդվածի հեղինակ Նրվանդ Ղազարյանի տեսակետը հերիաթի վնասակարության մասին, Ղ. Աղայանը բնագծում էր հերիաթի դաստիարակչական նշանակությունը։ «Իմ նպատակն է եղել և է, — գրել է նա, — հերիաթով հերիաթային աշխարհ մտցնել երեխային և այդ աշխարհում ոչ թե կրավորական դեր տալ նրան, այլ ներգործական, որ երեխան իր երեակայությանը մտնի հերոսի դերի մեջ, անի այն, ինչ որ հերոսն է անում, նրա պես բաջասիրտ լինի, նրա պես անվահեր, նրա պես հնարագետ, նրա պես վեհանձն ու ազնիվ»։

Եվ իսկապես, Աղայանի հերիաթները աղպիսի լույսով են ողողում մեր մանուկների ու պատանիների սրտերը, նրանց հերոսացնում, ազնվացնում ու գեղեցկացնում են ներքնապես։ Ահա թե ինչու Գյուրնազարյանը հատուկ բնագծում է հերիաթի ճանաչողական և դաստիարակչական նշանակության աղայանական բմբունումը։ Ղ. Աղայանի մոտ հերիաթային երեվոյթները «հանդես են գալիս որպես կյանքի իրական հարաբերությունների սիմվոլներ, — նշում է Բյուրնազարյանը, — և նպաստում են երեխայի կողմից կյանքի ավելի խորը ճանաչմանը»։ Ղ. Աղայանի մանկական ստեղծագործություններն ու դրույթները հագեցված են բազմաթիվ մանկավարժական նպատակաուղաց խորհուրդներով։

և. Բյուրնազարյանը իր աշխատության մեջ կանգ է առել նաև մանկապատանեկան «Աղբյուր» և «Հասկեր» պարբերականների գործունեության վրա, որոնց ակտիվ «թղթակիցներից» են եղել Ղ. Աղայանը և Հովհ. Թումանյանը։

Նշված հանդեսները զգալի դեր են կատարել հայ մանկական գրականության զարգացման գործում։

Հատուկ քննարկման ենթարկելով Հովհ. Թումանյանի՝ մանուկների համար գրած ստեղծագործությունները, և. Բյուրնազարյանը իրավացիորեն նրան համարում է «մի կիզակետ, որն իր մեջ է հավաքել այն բոլոր լավի ու լուսավորը, ինչին որ հասել են նախառույտիցին հայ մանկական գրականությունը, հայ մանկավարժությունն ու հայ մանկական գրականության տեսությունը» (էջ 92)։ Ինքը՝ մեծ բանաստեղծը խորապես ճանաչում էր մանկան հոգեբանությունը։ «Մանկությունը, — գրել է նա, — մարդու կյանքի էն ամենաբնորոշ շրջանն է, երբ նա շորս կողմից բնորոշում է սեռն ու առնում ու զարգանում շարունակ։ Հետևաբար՝ շարունակ էլ պետք է սնունդ տալ նրան, որ միշտ աճի ու զարգանա։ Եվ ահա, հենց էստեղ էլ հարց է առաջ գալիս. ի՞նչ սնունդ տալ և ի՞նչ ձևով տալ»։ Հովհ. Թումանյանը գտավ այդ «կախարդական բանալին» և դրանով էլ հենց կարողացավ թափանցել մանուկների հոգու խորքը։ Նրա մանկական երկերի բազմակողմանի քննարկման միջոցով և. Գյուրնազարյանը ցույց է տալիս այն բոլոր գեղարվեստական և ուսուցողական արժանիքները, որոնցով հագեցված են մեծ մանկագրի երկերը։ Առանձնապես ուշագրավ է «Ոսկի քաղաք» հերիաթի վերլուծությունը։

Գրքի վերջին գլխում հեղինակն ուրվագծում է սովետահայ մանկական գրականության ստեղծման ու զարգացման ուղին։ Նոր կյանքը, բնականաբար, նոր պահանջներ է առաջադրում մանկական գրականությանը։ Անհրաժեշտ էր մանկան մեջ դաստիարակել բնավորության նոր գծեր, հայրենասիրության ու ինտերնացիոնալիզմի նոր որակներ։ Այդ կարևոր խնդիրն իրականացվում է առաջին հերթին «Պատկում», «Կարմիր ծիլեր» և «Պիտներ» հանդեսներում, որոնց գործունեության մի քանի կոդմերը քննարկված են գրախոսվող աշխատության մեջ։ Աշխատության այս գլխում հեղինակը մանրամասնորեն անդրադառնում է Աթ. Խընկոյանի գրական ժառանգությանը, բնութագրում նրա տեղն ու դերը սովետահայ մանկագրության ձևավորման ու զարգացման մեջ։ Գրքում առանձին ակնարկներ են նվիրված Ս. Չարենցի, Սա. Ջուրյանի, Հ. Հայրապետյանի, Գ. Եմիրճյանի, Վ. Անանյանի, Մ. Կորյունի, Ա. Շալոնի և սովետահայ մյուս գրողների մանկապատանեկան երկերի վերլուծությանը։

Երախտավոր աշխատությունն ունի նաև թերի կողմեր։ Այսպես, բնագրվելով չափազանց լայն շրջանակներ (հնադարից մինչև մեր օրերը),



հեղինակը բոլոր դեպքերում չէ, որ սպառել է նյութը: Այդ պատճառով էլ մի շարք ակնարկներ (հատկապես հին և միջին դարերին վերաբերող, ինչպես նաև ժամանակակից մանկական գրականությանը նվիրված որոշ հոդվածներ) սխեմատիկ են ստացվել: Երրորդ գլխում հեղինակի տեսադաշտից դուրս է մնացել մանկական դրամատուրգիան, որը սովետական մանկական գրականության անկապտելի մասն է:

Նվազ մեկնարանություն են ստացել մանկական գրականության վերաբերյալ գրականագիտական-ընկալաբանական աղբյուրներն ու նյութերը: Այս հանգամանքն ավելի ակնբախ է հատկապես վերջին գլխում, որտեղ հեղինակը համարյա չի խոսում սովետահայ մանկապատանեկան գրականության մասին հրապարակված հոդվածների, գրքույկների ու բրոշյուրների մասին:

Անհրաժեշտ էր փոքր-ինչ հանգամանալից ակնարկ ձգել Հայրենական Մեծ պատերազմի շրջանի գրականության վրա, որպեսզի շտապվե՛ր:

այն տպավորությունը, թե սովետահայ մանկական գրականությունը, այսպես ասած՝ բաց շրջան է ունեցել: Թերություն պետք է համարել նաև այն, որ հեղինակը անտեսել է արևմտահայ մանկական գրականությունը:

Բոլոր ակնարկները չեն, որ գրված են գիտական մակարդակով: Հատկապես վերջին գլխում մենք հանդիպում ենք մի շարք վերլուծությունների, որոնք բովանդակությունը վերապատմելուց այն կողմ չեն անցնում, թողնում են լրացրալին սովորական հոդվածների տպավորություն: Գիրքը շահած կլիներ, եթե վերջում տրված լիներ օգտագործված աղբյուրների ցանկը և սկզբնաղբյուրների բերլիոգրաֆիան:

Չնայած վերոհիշյալ թերություններին, հ. Գյուլնազարյանի «Ակնարկներ հայ մանկական գրականության պատմության» գիրքը հաջողված գործ է, լուրջ քայլ՝ բազմադարյան հայ մանկական գրականության գիտական պատմությունը ստեղծելու ճանապարհին:

Գ. ԳԱՆԻՆԵՅԱՆ